«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման հարցում**

Դաստիարակ՝ Ռազմելա Վանեսյան

Մանկապարտեզ՝Սյունիքի մարզի Գորիսի «Վ.Սարգսյանի անվան թիվ 1 ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------2

Գլուխ 1 <<Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության դերը ընտանեկան դաստիարակության հարցում>>----------5

Գլուխ 2<<Մանկավարժական աշխատողի և ծնողի հաղորդակցման ձևերը>>---8

Գլուխ 3 Հետազոտական աշխատանքի ընթացքը----------13

Մանկավարժական անձնակազմի վերլությունը պարապմունքի վերեբերյալ---24

Եզրակացություն----------25

Օգտագործված գրականության ցանկ ----------26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այն տունը տուն չէ, որ մանուկ չունի,

Ուր դեռ չի հնչել ծիծաղը մանկան,

Այն տունը, սիրտ իմ, որ մանուկ չունի

Լեզվակը պոկած զանգի է նման:

Հովի. Շիրազ

Երեխաները մեր ապագան են:Սա իրականության հանրահայտ ձևակերպումներից է: Ընտանիքի ներգրավումը էական նշանակություն ունի մանկապարտեզում իրականացվող ուսուցման խթանման և հարստացման համար ու մեծապես նպաստում է տանը ձեռք բերած գիտելիքների ու հետաքրքրությունների նպատակաուղղված զարգացմանը: Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ նա ճանաչում է ինքն իրեն և ձևավորվում որպես անհատ: Երեխայի սոցիալականացման երկրորդ օղակը նախադպրոցական ուսումնական հաստատությունն է, որտեղ երեխան շփվում է հաստատում դաստիարակների և հասակակիցների հետ: Երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման համար կարևոր է համարվում մանկավարժական աշխատողի համագործակցությունը սանի ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ, որը նպաստում է ծնողի անմիջական մասնակցությամբ մանկապարտեզում կրթական աշխատանքների, ինչպես նաև ընտանիքում սանի ճիշտ դաստիարակության կազմակերպմանը: Մ . Երմոլովայի հետազոտությունները փաստում են,որ երբ ծնողներն ակտիվ մասնակցում են մանկապարտեզի գործընթացին, երեխան ցուցաբերում է ավելի բարձր առաջադիմություն, դրական վարք, հարգալից վերաբերմունք ընկերների և դաստիարակների հանդեպ, ունենում է հավատ սեփական անձի և հնարավորությունների նկատմամբ, ինչն էլ խթանում է նրանց ակտիվությանն ու մասնակցությանը ուսուցման գործընթացում: Փորձը ցույց է տալիս, որ ծնողների և դաստիարակների շփման և արդյունավետ համագործակցության արդյունքում նկատվում են երեխայի կայուն և շարունակական ձեռքբերումներ, նրանց մոտ ավելի արագ են ձևավորվում և զարգանում սոցիալական հմտությունները, վարքը դրականորեն է վերափոխվում ինչպես տանը, այնպես էլ նախակրթարանում: Երեխայի դաստիարակության, անձի ձևավորման գործում իր առաջնային, անգնահատելի և առանձնահատուկ դերն ունի ընտանքիը:Սակայն ընտանեկան դաստիարակության առաջնահերթությունն ու կարևորությունը չի նսեմացնում մանկապարտեզի և հասարակության դերը երեխայի դաստիարակության գործում: Ուստի պետք է կարևորենք այն օղակների համագործակցությունը, որն, անշուշտ, սկսվում է ընտանիքից: Ընտանիքները տարբերվում են միմյանցից իրենց կառուցվածքով, խնդիրներով, արժեքներով, կրթության նկատմամբ իրենց վերաբերմունքով: Ուստի անհրաժեշտ է ընտանիք

մանկապարտեզ փոխհարաբերությունն այնպես կառուցել, որ հաշվի առնվի առաջին հերթին յուրաքանչյուր երեխայի հնարավորությունները, առանձնահատկությունները, նաև ընտանքի պատվերը: Երեխայի դաստիարակությունը կախված է նաև ծնողների տեղեկացվածության մակարդակից, ուստի մանկավարժը պետք է սերտ համագործակցի նաև ծնողների հետ նրանց իրազեկելու նպատակով: Ունենալով մեկ ընդհանուր նպատակ՝ կրթել, դաստիարակել, զարգացնել երեխային բխում է հենց մանկավարժի համագործակցությունից, ծնողների, կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության իրագործումից: Ուստի որպես արդիական թեմա կիրականցվի հետազոտություն՝ մանկավարժի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցում:

Թեմայի արդիականություն:Մանկավարժական աշխատողի ու սաների ծնողների {նրանց օրինական ներկայացուցչի} համագործակցությունը,որն օգնում է սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում խնդիրներ լուծելիս՝ հիմք է դառնում երեխայի հոգեսոցիալական,համակողմանի և ներդաշնակ զարգացման համար,ինչը նախադպրոցական մանկավարժոըթյան մեջ սահմանվող առաջնահերթություններից է:

Համապատասխանությունը նոր չափորոշչի պահանջներին: Սանի ծնողը պետք է

որոշակի գիտելիքներ ունենա նոր հաստատված նախադպրոցական կրթության նախադպրոցական պետական կրթական չափորոշչի մասին,պետք է նաև տեղյակ լինի չափորոշչով ներկայացված վերջնարդյունքներին,ինչպես նաև կարողունակություններին,որպեսզի մանկավարժական աշխատողի հետ զուգընթաց նպաստի երեխաների հոգեսոցիալական, բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է մանկավարժական աշխատողի և սաների ծնողների ՝ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցության տարբեր ձևերի և մեթոդների միջոցով կարողանալ լուծել սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերը:

Նպատակից էլ բխեցնենք խնդիրները՝

-- Պարզել,թե որքանով են ուսումնասիրվող մանկապարտեզի սաների ծնողները և նրանց օրինական ներկայացուցիչներ համագործակցում մանկավարժական աշխատողների հետ՝ ներգրավված լինելով կրթական աշխատանքների հետ:

-- Ուսումնասիրել համապատասխան գրականություն և պարզել,թե որքանո՞վ է կարևոր մանկավարժական աշխատողի և ծնողի օրինական ներկայացուցչի համագործակցությունը՝ ընտանեկան դաստիարակության հարցում:

- Կազմակերպել և վարել բաց պարապմունքներ,սեմինարներ,ծնողների համաժողովներ,ընտանեկան ակումբներ,հարց ու պատասխանի երեկո,տնային

այցելություններ՝ բարձրացնելու սաների ծնողների ներգրավածությունը մանկապարտեզի կրթական աշխատանքների կազմակերպման մեջ և նպաստելու մանկավարժական աշխատողի համագործակցության միջոցով ընտանեկան դաստիարակության իրականացմանը:

Գլուխ 1

<<Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության դերը ընտանեկան դաստիարակության հարցում>>

Երեխայի կյանքի առաջին քայլերը սկսվում են ընտանիքից. Նրա վարքագիծը ընտանիքի կենսակերպի, ծնողների և ընտանիքի այլ անդամների դաստիարակչական ազդեցության արդյունք է: Վաղ տարիքի երեխաների սոցիալական զարգացումը կանոնակարգվում է երկու կառույցների միջոցով՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք:Որոշ մանկավարժներ,վստահելով իրենց գիտելիքներին ,համարում են,որ իրենք բոլորից ճիշտ են դաստիարակում:Այդպես են մտածում շատ ծնողներ՝ կարծելով,որ իրենց երեխային ավելի լավ գիտեն և հաջողությամբ կարող են լուծել նրան վերաբերող ցանկացած խնդիր:Երեխայի զարգացման որոշ ոլորտներում,օրինակ՝ հուզական,ֆիզիկական,ընտանիքի հնարավորություններն են ավելին,իսկ ուսուցման,ստեղծագործական ունակությունների զարգացման և այլն հարցերում՝ մանկապարտեզինը:Ընտանիքների և նախադպրոցական հաստատության գործունեության համատեղ ծրագիրը,հեշտացնում է երեխայի սոցիալական զարգացումը՝ սոցիալականացումը:Երեխաներին ճիշտ դաստիարակելու համար անհրաժեշտ է հասկանալ և հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի հոգեբանական և անհատական առանձնահատկությունները: Սակայն ոչ բոլոր ծնողներն ունեն դրա համար մանկավարժական գիտելիքներ: Մեծ է երեխայի դերը աշխարհայացքի հիմքերի ձևավորման,վարքագծի,բարոյական նորմերի յուրացման,մարդկանց,նրանց արարքների նկատմամբ վերաբերմունքը որոշելու գործում:Որպեսզի ընտանիքը հաջողությամբ հաղթահարի երեխաների դաստիարակությունը,ծնողները պետք է իմանան հիմնական մանկավարժական պահանջները և ստեղծեն անհրաժեշտ պայմաններ՝ ընտանիքում երեխա մեծացնելու համար:Ո՞րոնք են այդ պայմանները:Առաջին հերթին այն ընտանեկան մթնոլորտը,երբ ծնողներից ու ընտանեկան անդամներից յուրաքանչյուրը հասկանում է երեխաների դաստիարակության պատասխանատվությունը,չէ որ ընտանեկան ճիշտ դաստիարակության պայմանները ռացիոնալ կազմակերպված կյանքն է,կենսակերպը ընտանիքում:Նախադպրոցականի տարիքի լիարժեք դաստիարակությունը տեղի է ունենում ընտանիքի և նախադպրոցական հաստատության միաժամանակյա ազդեցության պայմաններում:Իսկ մանկավարժական աշխատողը,որպես կանոն,նման դրական դերում ընդունվում է որպես կրթության իրավահավասար գործընկեր,ում վստահում են,լսում,խորհուրդները:Մանկավարժի խնդիրն է երեխաներին բացահայտել ծնողների հետ աշխատանքի բոլոր ձևերի կարևորագույն ասպեկտները, հոգեբանական զարգացումները, նախադպրոցական մանկության յուրաքանչյուր տարիքային փուլում և կրթության համապատասխան մեթոդները, միաժամանակ ընդգծելով, որ երեխաներին դաստիարակելու համար պետք է ճանաչել նրանց և կարողանալ տեսնել, թե ինչն է բնորոշ մանկության յուրաքանչյուր

շրջանին և, մասնավորապես, ինչ է նկատվում ձեր երեխայի մեջ: Անհնար է ստիպել զարգացումը՝ առանց հաշվի առնելու երեխայի՝ նախադպրոցականի հնարավորությունները: Սակայն զարգացման հետաձգումը նույնպես անընդունելի է: Ուստի կարևոր է, որ ծնողները իմանան երեխաների զարգացման հոգեֆիզիոլոգիական ցուցումները:Մանկավարժական ազդեցությունների միասնական համակարգը և մանկապարտեզում ու ընտանիքում երեխային ուղղված միասնական պահանջները նպաստում են երեխայի վարքի որոշակի ոճի ձևավորմանը:Միևնույն ժամանակ երեխան ավելի քիչ դժվարություններ է ունենում վարքի,բարոյական նորմերի,սովորությունների յուրացման գործընթացում,և ավելի հեշտ է տիրապետում կրթական աշխատանքային գործունեության հմտություններին,շրջապատող երեխաների և մեծահասակների հետ շփման կանոններին: Ծնողները պետք է իմանան երեխայի հոգեբանական և անհատական առանձնահատկությունները, նրա գործառույթները՝ համապատասխան մանկապարտեզում կրթության և վերապատրաստման ծրագրին, որպեսզի ուսուցման գործընթացը ճիշտ ուղղությամբ տանեն: Դրա համար անհրաժեշտ է ծնողներին հնարավորինս ներգրավել մանկապարտեզի կյանքում: Հետևաբար, հետազոտության վարկածն այն է, որ եթե ծնողները իմանան երեխայի անհատականության ձևավորման հոգեբանական առանձնահատկությունները և հստակ իմանան դրանց գործառույթները՝ ակտիվորեն մասնակցելով մանկապարտեզի աշխատանքներին, միայն այդ դեպքում կմեծանա ազատ զարգացող անհատականությունը:Այնուամենայնիվ, համագործակցությունը նպաստում է նրան,որ կատարելագործվում է ծնողների մանկավարժական կուլտուրան:Դրա շրջանակներում ստեղծված ծնողական թիմի գործունեությունը հնարավորություն է տալիս փորձի փոխանակման միջոցով ավելի հաջող իրականացնել ընտանեկան դաստիարակությունը և բարձրացնելբնակչության ընդհանուր մշակույթի մակարդակը: Սաների կրթական աշխատանքների կազմակերպման հաջողությունը կախված է նրանից,թե ինչպես կզարգանան մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հարաբերությունները;Իսկ կրթական աշխատանքների կազմակերպման արդյունքը կարող է հաջող լինել,երբ նրանք դառնան համախոհներ:Ընտանեկան դաստիարակությունը բնութագրվում է խորը հուզական,մտերմիկ բնավորությամբ:Ընտանեկան դաստիարակության ուղեցույցը ծնողական սերն է երեխաների նկատմամբ և երեխաների փոխադարձ զգացմունքները՝ ծնողների նկատմամբ:Եվ որպեսզի ընտանիքը հաջողությամբ հաղթահարի երեխաներիդաստիարակությունը,ծնողները պետք է իմանան հիմնական մանկավարժական պահանջները և ստեղծեն անհրաժեշտ պայմաններ՝ ընտանիքում երեխա մեծացնելու համար:Նախադպրոցական տարիքի երեխայի լիարժեք դաստիարակությունը տեղի է ունենում ընտանիքի և նախադպրոցական հաստատությանմիաժամանակյա ազդեցության պայմաններում ,իսկ մանկավարժական աշխատողը,որպես կանոն,նման դրական դերում ընդունվում է որպես կրթության իրավահավասար գործընկեր,ում վստահում են,լսում խորհուրդները:Ընտանիքի հետ նպատակաուղղված շփման սոցիալական նշանակությունը կայանում է նրանում,որ մանկավարժական աշխատողը ճիշտ ձևով ուղղելով ծնողների ազդեցությունը երեխաների վրա՝ ազդում է նաև ներընտանեկան հարաբերությունների

վերակազմավորման վրա ,նպաստում ծնողների ամիատականության բարելավմանը:Դրանով իսկ արդեն բարձրանում է բնակչության ընդհանուր մշակույթի մակարդակը,նպաստում է նրան,որ կատարելագործվում է ծնողների մանկավարժական կուլտուրան:Դրա շրջանակներում ստեղծված ծնողական թիմի գործունեությունը հնարավորություն է տալիս փորձի փոխանակման միջոցով ավելի հաջող իրականացնել ընտանեկան դաստիարակությունը:Ի վերջո,մանկավարժական աշխատողի հիմնական խնդիրը պետք է լինի ակտիվացնել ընտանիքի մանկավարժական,դաստիարակչական գործունեությունը՝ դրան տալով նպատակային և սոցիալապես նշանակալի բնույթ:

Գլուխ 2

<<Մանկավարժական աշխատողի և ծնողի հաղորդակցման ձևերը>>

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը: Մեր աշխատանքի բուն նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները,մանկավարժական աշխատողի և ծնողի հաղորդակցման ձևերը երեխայի դաստիարակության հարցում:Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն են կազմում, քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխայի ճիշտ զարգացմանը նպաստելը: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզը շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը և թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Ընտաննիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համգործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնել հաջողության: Այժմ հանդիպումները փոխարինվում են նոր ոչ ավանդական ճանաչողական ձևերով, ինչպիսիք են KVN, մանկավարժական հյուրասենյակ, կլոր սեղան, հրաշքների դաշտ, ի՞նչ: Որտե՞ղ Ե՞րբ »,« Նորածնի բերանով »,« Թոք շոու »,« Բանավոր հանդես »: Նման ձևերը կառուցված են հեռուստատեսային և ժամանցային հաղորդումների, խաղերի սկզբունքի վրա, դրանք ուղղված են ոչ ֆորմալ կապեր հաստատել ծնողների հետ, նրանց ուշադրությունը գրավել մանկապարտեզի վրա:Ոչ ավանդական ճանաչողական ձևերը նպատակ ունեն ծնողներին ծանոթացնել երեխաների տարիքի և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, ծնողների գործնական հմտությունների ձևավորմանդաստիարակության ռացիոնալ մեթոդներին և մեթոդներին: Այնուամենայնիվ, այստեղ փոխվել են այն սկզբունքները, որոնց հիման վրա կառուցվում է մանկավարժների և ծնողների շփումը: Դրանք ներառում են երկխոսության վրա հիմնված հաղորդակցություն, բացություն, հաղորդակցության մեջ անկեղծություն, հաղորդակցման գործընկերոջը քննադատելու և գնահատելու մերժում: Հաղորդակցության այս ձևերի

կազմակերպման և վարման ոչ ֆորմալ մոտեցումը մանկավարժներին դնում է ծնողների ակտիվացման համար բազմազան մեթոդների օգտագործման անհրաժեշտության առջև:

●Նախադպրոցական ներկայացում

Նպատակը ծնողներին ծանոթացնել նախադպրոցական հաստատության, նրա կանոնադրության, զարգացման ծրագրի և ուսուցիչների թիմի հետ; ցույց տալ (հատվածաբար) յուրաքանչյուր երեխայի անհատականության զարգացման բոլոր գործողությունները: Աշխատանքի այս ձևի արդյունքում ծնողները օգտակար տեղեկություններ են ստանում երեխաների հետ աշխատանքի բովանդակության, մասնագետների (խոսակցական թերապևտ, հոգեբան, ակնաբույժ, լողի և կոփելու հրահանգիչ, սոցիալական մանկավարժ, հոգեբան) կողմից տրամադրվող անվճար ծառայությունների մասին:

●Բաց դասեր երեխաների հետ նախադպրոցական ուսումնական հաստատությունում ծնողների համար

Նպատակը. Ծնողներին ծանոթացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունում դասերի անցկացման կառուցվածքի և առանձնահատկությունների հետ: Պարապմունքի ընթացքում դաստիարակը կարող է դրանում ներառել ծնողների կողմից զրույցի տարր (երեխան կարող է հյուրին ինչ-որ նոր բան պատմել, ներկայացնել նրան իր հետաքրքրությունների շրջանակը):

●Ծնողների մասնակցությամբ մանկավարժական խորհուրդ

Նպատակը ծնողներին ներգրավելն է նրանց ընտանիքում երեխաների դաստիարակության հիմնախնդիրների ակտիվ ընկալման մեջ՝ ելնելով նրանց անհատական կարիքներից:

●Ծնողների համաժողովներ:

Նպատակը՝ ընտանեկան կրթության ոլորտում փորձի փոխանակում: Ծնողները նախօրոք պատրաստում են հաղորդագրություն, ուսուցիչը, անհրաժեշտության դեպքում, օգնություն է ցուցաբերում թեման ընտրելու հարցում, ելույթ կազմելով: Մասնագետը կարող է ելույթ ունենալ համաժողովում: Նրա ելույթը տրվում է որպես սերմ՝ քննարկում հարուցելու, իսկ հնարավորության դեպքում՝ քննարկում:

Համաժողովը կարող է անցկացվել մեկ նախադպրոցական հաստատության շրջանակներում, բայց կիրառվում են նաև քաղաքային և շրջանային մասշտաբների համաժողովներ: Կարևոր է որոշել համաժողովի բուն թեման («Երեխաների առողջությունը հոգալը», «Ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործում»): Համաժողովի համար նախապատրաստվում է մանկական աշխատանքների, մանկավարժական գրականության, նախադպրոցական հաստատությունների աշխատանքը արտացոլող նյութերի ցուցահանդես: Համաժողովը կարող եք ավարտել երեխաների, նախադպրոցական հաստատությունների անձնակազմի, ընտանիքի անդամների համատեղ համերգով:

●Մինի-հանդիպումներ:

Բացահայտվում է հետաքրքիր ընտանիք, ուսումնասիրվում է նրա դաստիարակության փորձը: Հետո նա երկու-երեք ընտանիք է հրավիրում իր մոտ՝ կիսելով ընտանեկան կրթության իր դիրքը:

●Մանկավարժական խորհուրդներ:

Խորհուրդը բաղկացած է մանկավարժից, ղեկավարից, հիմնական գործունեության գծով ղեկավարի տեղակալից, կրթական հոգեբանից, լոգոպեդ-ուսուցչից, գլխավոր բուժքույրից և ծնողական հանձնաժողովի անդամներից: Խորհուրդը քննարկում է ընտանիքի կրթական ներուժը, նրա ֆինանսական վիճակը և ընտանիքում երեխայի կարգավիճակը: Խորհրդի աշխատանքի արդյունքը կարող է լինել.

●Ընտանեկան ակումբներ:

Ի տարբերություն ծնողական հանդիպումների, որոնք հիմնված են դիդակտիկ հաղորդակցության ձևի վրա, ակումբը ընտանիքի հետ հարաբերություններ է կառուցում կամավորության և անձնական հետաքրքրության սկզբունքների հիման վրա: Նման ակումբում մարդկանց միավորում է ընդհանուր խնդիրը և երեխային օգնության օպտիմալ ձևերի համատեղ որոնումները: Հանդիպումների թեմաները ձեևակերպում և խնդրում են ծնողները: Ընտանեկան ակումբները դինամիկ կառույցներ են: Նրանք կարող են միավորվել մեկ մեծ ակումբի մեջ կամ բաժանվել ավելի փոքր ակումբների. Ամեն ինչ կախված է հանդիպման թեմայից և կազմակերպիչների գաղափարից:

●Երեխաների դաստիարակության, ուսուցման և զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ հատուկ գրականության գրադարանը նշանակալի օգնություն է ակումբների աշխատանքում: Ուսուցիչները վերահսկում են ժամանակին փոխանակումը, անհրաժեշտ գրքերի ընտրությունը, կատարում նոր ապրանքների ծանոթագրություններ:

●Ուսումնական խաղերի վարժություններ և առաջադրանքներ:

Դրանք օգնում են գնահատել երեխայի հետ փոխազդեցության տարբեր ձևերը, ընտրել նրան դիմելու և նրա հետ շփվելու ավելի հաջող ձևեր և փոխարինել անցանկալի կառուցողականներին: Խաղի մարզման մեջ ներգրավված ծնողը սկսում է երեխայի հետ շփումը, հասկանում է նոր ճշմարտություններ:

Ներկա փուլում ծնողների հետ աշխատանքի ձևերից մեկը տարբեր մրցույթների անցկացումն է:

●Հարց ու պատասխանի երեկո:

Նպատակը. Պարզաբանել ծնողների մանկավարժական գիտելիքները, դրանք գործնականում կիրառելու ունակությունը, նոր բան սովորել, միմյանց գիտելիքները լրացնել, քննարկել երեխաների զարգացման որոշ խնդիրներ: Հարցերի և պատասխանների երեկոները տալիս են կենտրոնացված մանկավարժական տեղեկատվություն հարցերի բազմազանության վերաբերյալ, որոնք հաճախ վիճելի են, և դրանց պատասխանները հաճախ վերածվում են թեժ, հետաքրքրված քննարկման:

<<Ինչ են շահում ընտանիքները>>

Ընտանիքների մասնակցությունը վաղ հասակի երեխաների կրթական ծրագրին արգասաբեր է մի շարք նկատառումներով: Խմբասենյակ հաճախող,ուսումնակրթական գործընթացին մասնակցող և առանձին տեսակների կրթական միջոցառումներ վարող ծնողները կամ ընտանիքի այլ անդամներ,շնորհիվ այդ իսկ մասնակցության,հնարավորություն են ստանում՝

●Սովորելու իրենց երեխաներին ընկալել մյուսների հետ փոխհարաբերությունների համատեքստում:

●Ավելի լավ հասկանալու երեխայի զարգացման փուլերը:

●Հստակորեն ըմբռնելու և գնահատելու մանկավարժական կազմի նշանակությունը:

●Հայտնաբերելու նոր խաղեր և միջոցառումներ,որոնք հաճելի կլինի կազմակերպել տանը

●Ծանոթանալու իրենց երեխաների ընկերների հետ:
Հաստատելու տևական բարեկամական հարաբերություններ մյուս ծնողների հետ:
●Խորացնելու երեխայի ուսուցումը տան պայմաններում:

<<Ինչ են շահում մանկավարժները>>

Խմբասենյակում ծնողների ներկայությունը մանկավարժներին հնարավորություն կընձեռի՝
●Ավելի շատ ժամանակ հատկացնել երեխաների հետ անհատական պարապմունքներին կամ օգտվել փոքր խմբերի հետ աշխատելու հնարավորությունից:
●Պատկերացում կազմել այն մասին,թե ինչպես են ծնողները խրախուսում երեխաներին:
●Տեսնել,թո ինչպես են ծնողները երեխաներին օգնում առաջացած պրոբլեմները լուծելիս:

●Ավելի լավ տեղեկանալ տարբեր մշակույթների առանձնահատկություններին:
●Իմանալ այն հատուկ հմտությունների և հետաքրքրությունների մասին,որոնք ունեն այս կամ այն ընտանիքի անդամները և երեխաները,օրինակ՝ երաժշտական գործիքներ նվագելու կարողություն):

<<Տնային այցելություններ>>

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:
Տնային այցելությունների ծրագրերը բովանդակային և մեթոդական առումով խիստ բազմազան են: Դրանք իրաից նշանակալիորեն տարբերվում են ըստ այնհանգամանքի, թե այցելության նպատակը ծնո՞ղն է, երեխա՞ն, թե՞ ընտանիքը: Տնային այցելություն կատարողի և ծնողի միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն համագործակցային սկզբունքով: Կարելի է տնային այցելություններն այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը քիչ կամ բոլորովին անհրաժեշտ չլինի: Սա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնելն է կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագիրը տան պայմաններում իրականացնելը: Այստեղ նույնպես կիրառվելու է երեխայակենտրոն մոտեցում, որը չի պահանջում ծնողների ներկայությունը:
Տնային այցելությունները մի յուրահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին: Միևնույն ժամանակ պետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:

Ժողովներ վարելիս հարկավոր է՝

●օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ,հարմարավետ և ցանկալի հյուր զգալ,քանի որ մանկապարտեզը մանկավարժի տարածքն է
●հաղորդակցվել ծնողների հետ՝ իրենց մակարդակին համապատասխան ,խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից

●շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,
●ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ,որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին:

Խորհուրդներ ծնողներին երեխայի վարքը և մտահորիզոնը զարգացնելու համար

--Հաճախակի զբոսնեք ձեր երեխաների հետ և զրուցեք ամեն ինչի մասին:
--Փորձեք տարբերել կերպարներ և ձևեր երկնքում սահող ամպերում:
Կազմակերպեք պարզ բառախաղեր: Թող երեխան թվարկի շարժվող և անշարժ առարկաներ:
--Խնդրեք նրան ուշադիր լսել շրջապատի ձայները, հետո տարբերել դրանք:
--Կարևոր են նկարչությունն ու գունազարդումները:
--Երևակայությունը խթանում է նաև զգեստափոխումները:
--Օգնել երեխային, երբ նա դժվարանում է ինչ-որ բան նկարելիս:
--Ճիշտ պատկերացում տվեք ինչ-
որ առարկա նկարելիս:Աշխատանքի ժամանակ օգտագործել այն, ինչ որ կա ձեռքի տակ՝ ամսագրեր, թերթեր, գործվածքներ, թելեր, պարաններ և այլն:

Գլուխ 3

Մեր առջև դրված կարևորագույն խնդիրներից է՝ էկոլոգիական օրինա-
չափությունների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպան
ումը: Այդ գործընթացը պետք է սկսել նախադպրոցական տարիքից, քանի որ այս տարիքու
մ երեխան ավելի հուզականորեն է ընկալում՝ բնությունից ստացված տպավորությունները,
և դրանք խոր հետք են թողնում նրա գիտակցության մեջ: Երեխան ծանոթանալով շրջակա
միջավայրին՝ գիտակցում է, որ Երկիրը մեր ընդհանուր տունն է, և այն պետք է պահպանել
ու խնամել:

Հետազոտական աշխատանքի ընթացքը

Ավագ խումբ,դաստիարակ՝ Ռազմելա Վանեսյան

Բաց պարապմունք՝ Ինձ շրջապատող աշխարհը մեթոդիկայից

Ներկաներ՝ Մանկավարժական անձնակազմ, ծնողներ

Երեխաների թիվը՝ 25 (քսանհինգ)

Տևողությունը՝ քառասուն րոպե

Թեմա՝ **<<Երկիր մոլորակն իմ ու քո տունն է>>**

Նպատակը՝ ամրապնդել և զարգացնել երեխաների գիտելիքները Երկիր մոլորակի և նրա
բնակիչների վերաբերյալ, սեր արթնացնել և հոգատար վերաբերմունք ձևավորել նրա նկա
տմամբ, կարողանալ հիանալ բնության գեղեցկությամբ, զարգացնել երեխաների հիշողութ
յունը, ուշադրությունը,մտածողությունը և երկխոսության մեջ մտնելու ունակությունը:

Կապը չափորոշչի հետ

Խոսք և հաղորդակցման ոլորտ

Զ. Հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունը
և փոխկապակցվածությունը,ունի տարրական պատկերացումներ կենդանական
աշխարհի և անկենդան բնության մասին:

Իմացական ոլորտ

Ա. Սանը վերլուծում է երևույթների պատճառահետևանքային կապերը,ներկայացնում է
իր պատկերացումներն ու վերաբերմունքը,

Բ. Նկարագրում և մեկնաբանում է շրջապատող միջավայրում ընթացող երևույթները ,սեփական որոշումներն ու գործողությունները:

Հուզական,սոցիալ-անձնային ոլորտ

Ը. Ունի սուբյեկտիվ վերաբերմունք արտաքին աշխարհի հանդեպ,ինքնավերլուծության է ենթարկում սեփական վարքագիծն ու անձնային հատկությունները:

Ինքնասպասարկման, անվտանգության,առողջ ապրելակերպի ոլորտ

Ը. Բացատրում է շրջակա միջավայրին խնամքով վերաբերվելու անհրաժեշտությունը

Ակնկալվող վերջնարդյունքներ՝ ճանաչի երկրագունդի մոդելը,որպես ողջ մարդկության միասնական տուն,հասկանա մարդու՝ որպես բնության մի մասնիկի կապը կենդանական և բուսական աշխարհի հետ,բացատրի բնության մեջ մարդու աշխատանքի կարևորությունը,արժևորի բնության գեղեցկությունը և դրսևորի այն պահպանելու ճիշտ վարքագիծ:

Անհրաժեշտ պարագաներ՝ բնություն պատկերող մեծադիր նկար,բնության ցուցադրական վահանակ,թղթեր,գունավոր մատիտներ,ջրաներկ,լաթեր,վրձիններ,ջրամաններ,փեթուրներ,խոտեր,պլաստիլին,տախտակներ՝ երեխաների թվով:

Թռչունների տարածք՝ սեղան, երաժշտական կենտրոն, թռչունների նկարներ, «Ե» տառի պատկեր:: Այս կանգառում երեխաները կատարում են երգեր թռչունների մասին , սովորում են տարբերել նրանց ձայները և շարժվում երաժշտության ռիթմին համապատասխան:

Անտառի տարածք՝ ընտանի ու վայրի կենդանիներ պատկերող նկարներ, «Ր» տառի պատկերը,ծառերի նկարներ,անտառային ձայներ:Որսորդական պարագաներ:Զարգանում է լսողությունը,արագաշարժությունը:

Միջատների տարածք՝ սեղան, միջատների նկարներ, «Կ» տառ պատկերող քարտ: Այստեղ զարգանում են երեխաների գիտելիքները միջատների վերաբերյալ, ճանաչում են նրանց կառուցվացքը, մեծանում է հետաքրքրությունը նրանց նկատմամբ:

Ծաղիկների տարածք՝ ծաղիկների նկարներ, փուչիկներ՝ ծաղկի սերմերի համար, «Ի» տառը: Այստեղ երեխաները զույգեր են կազմում, սովորում անվանել ծաղիկները, ճիշտ կազմել գոյականի հոգնակի թիվը, անվանել գույները, յուրացնել հատկանիշ արտահայտող բառեր:Ծնողները փորձում են թվարկել ծաղիկների անվանումներն ու նրանց կենսապայմանը:

Հրաշքների դաշտ՝ ծաղիկների սածիլներ, բահ, խոնավ անձեռոցիկներ, «Ր» տառ պատկերող քարտ: Այս մթնոլորտում զարգանում են երեխաների աշխատասիրությունը, ընկերական փոխհարաբերությունները: Արթնանում է սեր բույսերի նկատմամբ: Նրանք սովորում են խնամքով վերաբերվել դրանց:

Բաշխիչ նյութեր՝ ծաղկած ծառ,շվի,կոճղ,Երկիր մոլորակի նկար,թռչնավանդակ,շիվեր,դույլեր,ցնցուղներ,հող,սերմեր,քարտեր,գլոբուս,եռագույն դրոշ,զինանշան,մոլբերտ:

Ճանապարհորդության ընթացքը՝Երաժշտության հնչյունների ներքո երեխաները մտնում են դահլիճ,նրանցից հետո ծնողները ևս քայլքով մտնում են, զբաղեցնում իրենց տեղերը,միմյանց ողջունում:

Խթանման փուլ

Դաստիարակ ՝Մեր Երկիրը մի մոլորակ է՝ լի հրաշքներով ու հանելուկներով: Մենք շրջապատված ենք հրաշալի բնությամբ, որտեղ ապրում են մարդիկ, կենդանիներ, թռչուններ, միջատներ, բույսեր ու ծառեր: Մարդը պետք է հոգ տանի կենդանի բնության նկատմամբ ու չվնասի նրան:Այսօր մենք կկատարենք մի շատ հաճելի ճանապարհորդություն: Ձեզ բարի երթ:

Հովվի կանչ—բնության ձայներ

Դաստիարակ--- Երեխաներ,ի՞նչ ձայներ եք լսում:

Երեխաներ----Բնության ձայներ,հովվի սրնգի ձայն,գետակի կարկաչի,թռչունների ծլվլոց,միջատների տզզոց:

Դաստիարակ---Ի՞նչ եք կարծում,տարվա որ եղանակն են խորհրդանշում այդ ձայները:

Երեխաներ---Գարուն

Դաստիարակ---Մի պահ փակեք ձեր աչքերը,պատկերացրեք,որ դուք բնության գրկում նստած եք,ինչպե՞ս կներկայացնեք գարունը:

Երեխաներ---Գարնանը սառած գետինը տաքանում է և սկսում է կանաչել : Տերևազուրկ ծառերը բողբոջում ու բացվում են,սար ու ձոր կանաչ են հագնում:Ես տեսնում եմ,որ գույն-գույն ծաղիկներն արևի տակ փայլում են,իսկ նորեկ-երգեցիկ թռչունները ձայն ձայնի տված ծլվլում են,ինձ թվում է,թե մեր խմբի երեխաներն են ժպտում:-Կարծես բոլոր շնչավորները ձեռք ձեռքի տված պար են գալիս,զվարճանում են

Իմաստի ընկալման փուլ

Դաստիարակ----գարնան բնութագրիչ առանձնահատկություններ,նախապես մեկ ամսվա ընթացքում խոսվել է դրանց մասին:

Դաստիարակ---Դե եկեք դիմավորենք մեր գարուն եղանակին:

Գարուն- Ծնողի- մուտք --մեղմ երաժշտության ներքո

Ծնող `Գարուն--Ողջույն,ողջույն,հազար բարև,երգ,կարկաչով Ձեզ խինդ ու սեր: **Երեխաներ**---Ողջույն,ողջույն:

Ծնող -Գարուն-- Ես հեռվից լսեցի,թե ինչպիսինն եմ ես ձեր պատկերացմամբ:Շնորհակալ եմ,որ ինձ ներկայացրիք:Այսօր ես դատարկաձեռն չեմ եկել:Ինձ հետ բերել եմ անակնկալներ և դուք պետք է հաղթահարեք փորձությունները ու ստանաք այն: Դե ինչ պատրա՞ստ եք:

Երեխաներ---Այո,պատրաստ ենք:

Ծնող Գարուն –Որո՞նք են գարնան ամիսները:

Երեխաներ—Պատասխաններ-Գարնան ամիսներն են՝ մարտ,ապրիլ,մայիս:

Ծնող –Կարո՞ղ եք բնութագրել ամիսները,ես գիտեմ,որ դուք արդեն սովորել եք միջին խմբում:

Երեխաները պատասխանում են՝ Մարտ ամսին գարունը լույս է բերում,երկինքն օրեցօր երկնագույն է դառնում,արևն ավելի քնքշորեն է տաքացնում և օդը լցվում է թաևմաշունչ ու քաղցրաշունչ բուրմունքով:Այն ջրի գարունն է,ձյունը հալչում է,սարերից ու լեռներից հոսում են ու խոխոջում են առվակները:Գիշեր-ցերեկ աղմկում,երգում,կյանք է առնում բնությունը:Մարտ ամսին տոնում ենք գարնան առաջին օրը,մայրիկների տոնը:**Ապրիլը** կանաչ գարուն է:Մերկ ծառերն արթնանում են,նրանք բողբոջում են,կանաչում:Ծլվլում են թռչունները,աշխուժանում են միջատները,բոլոր կենդանի էակները ձագուկներ են ունենում:Ապրիլ ամսին կերը շատ է լինում:Ապրիլին տոնում ենք Ծաղկազարդը,Սուրբ Զատիկը:

Մայիսը վարդագույն գարուն է:Այգիներում,պարտեզներում ծաղկում են ծիրանենիները,բալենին,դեղձենին,նշենին,տանձենին ու խնձորենին:Պուրակներն ու փողոցները զարդարում են բազմագույն հոտավետ ծաղիկները:Մայիսին տոնում են Հայաստանի առաջին Հանրապետության օրը:

Դաստիարակ՝ կեցցեք,երեխաներ:Գարուն,դու պետք է փոքրիկներին տաս առաջին անակնկալը:

Գարուն---Այո,դուք ստանում եք Ձեր ճանապարհորդության առաջին տառը(Ե)

Երգ--- <<Գարուն>>

Եկեք գնանք թռչունների տարածք:

Դաստիարակ՝

Տնակը նրանց փոքրիկ անվանում են բույն,
ծածկված են փետուրով,բազմերանգ ու բազմագույն,դայլայլում են, ճտճտում,ճախրում օդում կապուտակ,ուտում հատիկ ու միջատ: Նրանց կոչում են...

Երեխաներ - թռչուններ:

Ապրեք: Մենք հայտնվեցինք թռչունների տարածքում: Ինչպիսի՞ թռչուններ գիտեք (պատասխան):-Այժմ մենք կխաղանք «Ծիտիկները և կատուն» շարժախաղը:

Դաստիարակ՝Շատ լավ խաղացինք: Իսկ ուրիշ ի՞նչ թռչունների անուններ գիտեք (պատասխան):

Ֆիզկուլտդադար-
Ապրեք: Քանի որ դուք այդքան թռչունների եք ճանաչում, ինձ թվում է հաջորդ առաջադրանքը ևս կարող եք հաջողությամբ կատարել: Ես կասեմ մի շարք թռչուններ ի անուններ: Հենց լսեք, որ ես սխալվում եմ, այսինքն՝ թռչնի անուն չեմ տալիս, դուք պետք է միանգամից դժգոհեք (ոտքերով դոփել կամ ծափ տալ) և ուղղեք ինձ:

Թռան եկան թռչունները՝աղավնիները, ծիծեռնակ,մոծակ, մրջյուն (դոփեր),թռան եկան թռչունները՝աղավնիներ, ծիծեռնակ,արագիլներ ու ագռավ,սարյակ, կարապ, զատիկ, բզեզ (դոփեր):

Դաստիարակ -
Ապրե՛ք, երեխանե՛ր, դուք շատ խելացի եք. բոլոր թռչուններին գիտեք, իսկ որտե՞ղ են ապրում նրանք;

Երեխաներ -Ոմանք անտառում, ոմանք՝ բացատում, ոմանք՝ մարդկանց կողքին:

Դաստիարակ -
Իսկ դուք գիտե՞ք, թե ո՞ր թռչուններն են կոչվում ընտանի (պատասխան),որո՞նք են գարնան ավետաբեր թռչունները (պատասխան)՝ բնութագրում են մի քանի թռչունների արտաքին տեսքն ու
առանձնահատկությունները:Այժմ մենք կդառնանք արագիլներ և միասին կերգենք ու կպարենք:/Երեխաները դաստիարակի հետ միասին երգում են
արագիլի մասին երգը և կատարում համապատասխան շարժումներ:

Դաստիարակ-
Ապրե՛ք, երեխանե՛ր, ասացեք՝ դուք թռչուններին սիրու՞մ եք, չե՞ք նեղացնում նրանց: Կերակրու՞մ եք, բույն պատրաստու՞մ եք նրանց համար: Քանի որ դուք այս քան պատրաստված երեխաներ եք, ես ձեզ տալիս եմ «Ր» տառը:**Բարի՛ ճանապարհ:**

Անտառային տարածք ---Անտառային ձայներ

Դաստիարակ- Այժմ գուշակեք հետևյալ հանելուկը.
«Գարնանը հագնվում է, աշնանը հանվում»:

Երեխաներ՝ Անտառ:

Դաստիարակ- Երեխաներ, դուք եկել եք անտառային տարածք:

Հետևեք ինձ՝ կատարելով համապատասխան շարժումներ

-Բարև, անտառ, չքնաղ անտառ (լայն տարածում են ձեռքերը)՝

Հեքիաթներով, հրաշքով լի (ձեռքերը ուղղում են առաջ):

Ո՞վ է թաքնված քո խորքում:

Ի՞նչ կենդանի, ի՞նչ գազան (ձեռքերը դնում են ճակատին և նայում հեռու):

Եվ դեռ անտառ չմտած՝ մեղուները խայթեցին (ցուցադրում են մոծակի խայթոցը):Շ արունակում են քայլել անտառում (քայլք), Հանդիպում են արջուկի (իրանը թեքում ե ն աջ և ձախ):

Նորից քայլում են (քայլք), Հանիպում են առվակի (կատարում են ցատկ):

Քամին շոյում է մեր դեմքը՝ձեռքերով շոյում են դեմքը:

Դաստիարակ--- Ապրե՛ք, երեխանե՛ր:Այժմ գուշակենք հանելուկը,հսկում է միշտ անտառը,խնամում ծառ- ծաղիկ,բարեկամն է բնության,գազանների,մարդկության:Ասեք,տեսնեմ,ո՞վ է նա…

Երեխաներ՝ Անտառապահը:

Դաստիարակ---Ապրեք,ճիշտ է.նա հոգ է տանում անտառի ու նրա բնակիչների մասին,պահպանում է նրանց:Իսկ ովքեր են անտառի բնակիչները,երեխաները թվարկում են:

Անտառապահ—Հայր ծնող –Երեխաներ ծառերի դերը շատ մեծ է բնության մեջ,քանի որ ծառերը հարստացնում են մեր բնությունը:Ծառերը օդը հագեցնում են թթվածնով,դրա համար էլ այգիներում,անտառում,պուրակներում,ուր շատ ծառեր կան,օդը մաքուր է և զով:

Փորձ—դիտարկում --Վերցնենք ծառի ճյուղը,զգուշությամբ կեղևը բարձրացնենք և տեսնենք,թե ինչ կա կեղևի տակ,տեսանք,որ մանր որդեր կան:

Երեխաներ—Ծառի ճյուղի կեղևը լինում է հաստ և բարակ:

Անտառապահ—Երբ պետք է կտրենք ծառը:

Երեխաներ---Երբ տերևները դեղնում են,չորանում են,հիվանդանում են և այլ պատասխաններ:

Խաղ՝ Այո-ոչ

Դաստիարակ---Ես ձեզ կասեմ իմ գործողությունները;Եթե դրանք լինեն լավ արարքներ,ասեք՝ այո,վատի դեպքում բղավեք՝ ոչ:ՈՒշադիր լսեք;

Երբ անտառ եմ ես գնում,խոտաբույս եմ ես պոկում------**Ոչ:**

Պաղպաղակ եմ ես ուտում և թուղթը վայր եմ գցում-----**Ոչ:**

Հացի փոքրիկ մնացորդը թռչուններին եմ տալիս-----**Այո:**

Իսկ ավելորդ մնացորդը ինձ հետ դուրս եմ ես տանում--- **Այո:**

Շատ եմ սիրում բնությունը և միշտ պահպանում եմ այն-- **Այո:**

Դաստիարակ---Ապրե՛ք, երեխանե՛ր:Դուք ստանում եք ձեր <<Կ>>տառը:Շարունակում ենք մեր ճանապարհորդությունը:

Ծաղիկների տարածք

Դաստիարակ՝մայրիկներ,ինչ եք կարծում,այս փորձությունն էլ եկեք դուք հաղթահարեք:Դուք ծաղիկներ սիրում եք--/այո/,հիմա կստուգենք:Թվարկեք ծաղիկների անվանումներ,նկարագրեք/ պատասխանում են/;Ինչ եք կարծում,ինչ են անհրաժեշտ,որպեսզի ծաղիկներն աճեն,գեղեցկանան/ պատասխանում են

---հող,ջուր,ջերմություն,հոգատար ձեռքեր:

Դաստիարակ---Իսկ հիմա երեխաներ ծաղիկների մասին հանելուկներ առաջարկենք մայրիկներին,որպեսզի միասին ստանանք Ի տառը:

Հանելուկներ՝Գլխարկը կապույտ ,շապիկը կանաչ,

Մի սիրուն ծաղիկ՝ամենքին ճանաչ----ՄԱՆՈՒՇԱԿ:

Դաշտի ծաղիկ է մարդկան բարեկամ,

Ճերմակ թերթերով՝ նուրբ ու դուրեկան---ԵՐԻՑՈՒԿ:

Դաստիարակ---Ապրեք,հիանալի է,սիրելի ծնողներ:Պարապմունքի ավարտին մենք միասին ծաղիկներ կցանենք: Մենք ստացանք Ր տառը:

Միջատների տարածք—երեխաներ,մենք հասանք միջատների տարածք:Եկեք գուշակենք թե այս ինչ տզզոց է/ Մեղվի տզզոց/,իսկ այս ինչ է թաքնվել խոտերում՝ զատիկ:Ճիշտ է,զատիկ է:Այսպիսի անվանում են տվելկարմիր պուտերով բզեզին:Զատիկը միջատ է:Ինչպես կարելի է արտաքինից ճանաչել միջատներին,բոլոր միջատներն էլ ունեն գլուխ,կուրծք,փոր և այլն:Միջատների մասին հանելուկներ կառաջարկեմ ձեզ:

Ծառի բնին շարվեշարան.տեսա երկար մի քարավան,

Աշխատում են առանց դադար,պաշար կիտում ձմռան համար /Մրջյուն/

Ի՞նչ միջատ է թևավոր,թռչում,անցնում սար ու ձոր,

Առավոտից իրիկուն ծաղկափոշի հավաքում /մեղու/

Թևեր ունի գույնզգույն,ծիլ ու ծաղիկ է սիրում,

Թռչկոտում է սար ու ձոր,կյանքն էլ կարճ է՝ լոկ մի օր;/ թիթեռ/:

Շարժախաղ՝ <<Բռնիր մոծակը>>:

Կեցցեք,երեխաներ դուք ստացաք <<**Ր>>** տառը;Մեր ճանապարհորդությունն ավարտվեց:Իսկ հիմա եկեք մեր վաստակած տառերը հավաքենք,տեսնենք, ինչ բառ կարելի է կազմել այդ տառերով:Միասին արտասանում են <<**Երկիր>> :**Քանի տառ կա,քանի հնչյուն,քանի ձայնավոր,քանի բաղաձայն,քանի վանկ/երեխաները պատասխանում են/:

Հարց ու պատասխան—Որն է մեր երկիրը,որոնք են խորհրդանիշները/դրոշ,զինանշան,օրհներգ/

--Ապրե՛ք, երեխանե՛ր, դուք շատ խելացի եք:

Դաստիարակ---Մեր մոլորակը՝ Երկիրը,հարուստ է սարերով,ձորերով,անտառներով,կենդանիներով,թռչուններով:Նա առատաձեռն է մեր հանդեպ:Այն մեր տունն է:Դե ուրեմն եկեք,պահպանենք,հոգ տանենք նրա մասին և ոչ ոքի չթողնենք,որ վնասի,փչացնի այն,կամ ցավ պատճառի նրան: Իսկ հիմա եկեք վերցրենք կերպաևվեստի մեր պարագաները և ստեղծենք ձեր սիրած մոլորակը՝ Երկիրը ու այնտեղ բնակվող ամեն ինչ:
Ձոն բնության երգի հնչյունների ներքո երեխաները աշխատում են:

Հրաշքների դաշտ՝ Ծնողները պարապմունքի ավարտին մաքրում են նախակրթարանի այգին,մեկական ծաղիկ են տնկում պարտեզի համար,որպեսզի մեր շրջակաը,մեր Երկիրն էլ ավելի գեղեցկանա:

ԵՐԿԻՐ ՍՈՒԼԻՆԱՑՍ
ԻՄ ՈՒ ՔՈ ՏՈՒՆԸ Է

Մանկավարժական անձնակազմի վերլությունը պարապմունքի վերեբերյալ

Տնօրեն՝ Ս.Ադունցի վերլուծությունը պարապմունքի վերեբերյալ

Նախքան պարապմունքն սկսելը, երբ մտա դահլիճ, շուրջս տիրող գեղեցիկ միջավայրը,դիդակտիկ պարագաների առկայությունը, թե՛ երեխաների և թե՛ դաստիարակի ճաշակով ընտրված թեմային համահունչ հագուստը, ջերմ ու տրամադրող մթնոլորտը փաստում էր, որ տեղի է ունենալու մի հրաշալի պարապմունք, որից տպավորված են լինելու և՛ երեխաները, և՛ հյուրերն ու ծնողները. և ես չսխալվեցի:Դաստիարակն այնպիսի արդիական թեմա էր ընտրել, որի ընթացքում ստացած գիտելիքները երեխաներն օգտագործելու են ամբողջ կյանքում: Նա իր գրագետ խոսքը փոխանցել էր երեխաներին, ովքեր անկաշկանդ, միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքով վերերտադրում էին իրենց մտքերը և ներկայացնում հավուր պատշաճի:Ընտանիքը և մանկապարտեզը երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներ են, որոնք ազդում են երեխաների վրա մանկության տարիներից: Միայն այս երկու օղակների համագործակցության դեպքում հնարավոր է ձևավորել երեխաների մեջ բարձր բարոյական որակներ, ինչը և իրականացրել է փորձառու դաստիարակը՝ օգտագործելով ճկուն հնարներ ու նորարարական մեթոդներ՝ գործի դնելով իր մասնագիտական հմտություններն ու կարողությունները, ծնողավարման գրագետ ձևերը, տարիների անխոնջ աշխատանքի փորձը:Ես փաստում եմ, որ դաստիարակը լիովին հասել է իր առջև դրված նպատակներին և վերջնարդյունքին:

Մեթոդիստ՝ Բ.Բաղդասարյան—Ես ՝ որպես մեթոդիստ,հաճախակի եմ լսումներ կատարում դաստիարակչուհի Ռ. Վանեսյանի մոտ և ամենօրյա անցկացվող դաստիարակչական պարապմունքների անցկացման հետևանքով է,որ այսօրվա պարապմունքը շատ ուսուցողական էր և արդիական:Այն կառուցված էր ԽԻԿ համակարգի հիման վրա:Դաստիարակը հասավ իր նպատակին՝ թե երեխաների,թե մանկավարժների,թե ծնողների գիտակցությունը հասցրեց նրան,որ եթե ուզում ենք մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն,ապա յուրաքանչյուր մարդ շրջակա միջավայրի պահպանությունը պետք է դարձնի իր սուրբ պարտականությունը:Պարապմունքը հագեցած էր դիդակտիկ պարագաներով,դաստիարակի խոսքը հստակ էր,գրագետ,երեխաները բավականին ակտիվ էին՝ զինված գիտելիքներով,իսկ գործնական աշխատանքն՝ ավելի արդյունավետ:

Եզրակացություն

Մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք,որ ծնողների հիմնական մասը չունի մանկավարժական կրթություն,չի տիրապետում երեխայի զարգացման ու դաստիարակության հիմնահարցերին:

Նրանք հիմնականում հենվում են մանկապարտեզում իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքի վրա:Որոշ ծնողներ ինքնուրույն օգտվում են համապատասխան լրատվական աղբյուրներից և այդ հիմքով կազմակերպում իրենց երեխաների առօրյան:Նրանց հետ անցկացված հարց ու պատասխանի և թեմատիկ զրույցների միջոցով պարզ դարձավ,որ նրանք ցանկություն ունեն ձեռք բերելու մանկավարժական գիտելիքներ:Նրանք չեն տիրապետում երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններին,ինչպես նաև հոգեկանի զարգացման օրինաչափություններին,այդ պատճառով էլ դժվարանում են ընտանիքում ճիշտ կազմակերպել երեխայի դաստիարակությունը:Հաշվի առնելով ընտանեկան դաստիարակության առկա վիճակն ու դաստիարակության ժամանակակից մոտեցումները՝ հարկավոր է մշակել նախադպրոցական ընտանեկան դաստիարակության ուղեցույց՝ հրահանգներ,խորհուրդներ,մեթոդական ցուցումներ,որտեղ կներգրավվեն դաստիարակության ժամանակակից մոտեցումներից բխող հրահանգներ,ինչպես նաև բազմաբովանդակ խորհուրդներ ծնողներին: Պարզեցինք,թե ուսումնասիրվող մանկապարտեզում հետազոտության մեջ ընդգրկված սաների ծնողները ինչպես են իրականացնում ընտանեկան դաստիարակությունը և որքանով են համագործակցում մանկավարժական աշխատողների հետ:Հիմնվելով հարցաթերթիկների և մաթեմատիկական վիճակագրության վրա, կարող ենք փաստել,որ ընտանիք- մանկապարտեզ համագործակցությունը՝ ուղղված ընտանիքում երեխաների ընտանեկան դաստիարակության կազմակերպմանը,ունի միջին մակարդակ:Այնուամենայնիվ,ծնողներից շատերը գտնում էին,որ ընտանիք մանկապարտեզ համագործակցությունը երեխայի լիարժեք զարգացման կարևոր նախապայմաններից է:

Եթե ընտանեկան դաստիարակության հիմունքները կառուցած լինեն ազգային ավանդույթների և ժամանակակից նախադպրոցական մանկավարժության պահանջների ոգով,ապա հայ ընտանիքը կպահպանի իր ազգային դիմագիծը,և երեխաները կլինեն հայրենասեր:Նման սերունդները կապահովեն ամուր ընտանիք,իսկ կայուն ու ամուր ընտանիքն ազգի գոյապահպանման հիմքն է:Գալով ամփոփ եզրակացության ,նշենք,որ միայն ճիշտ և գրագետ համագործակցության,նշենք,որ միայն ճիշտ և գրագետ համագործակցության միջոցով ,ինչպես նաև փոխվստահությամբ կարող ենք նպաստել երեխաների կրթական և դաստիարակչական մի շարք հարցերի լուծմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս «Մանկավարժություն», Երևան 2005թ.
2. Մակարենկո Ա. Ս. «Դաստիարակություն ծնողության վերաբերյալ», 1940թ.
3. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2010թ.
4. Սմբատյան Լ. «Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում», Երևան 2014թ.
5. «Նախաշավիղ» հանդես
6. Քայլ առ քայլ «Այնքան ծանոթ և անծանոթ մեր երեխան»
7. Осипова Л. Е. «Работа детского сада с семей» М. 2008г.